Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. հունվարի 27-ի թիվ 12-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 7
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 8
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 15
7. Հավելվածներ - էջ 18

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 254-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ֆինանսների նախարարություն:
Հաշվեքննության առարկան	ՀՀ ֆինանսների նախարարության 2021 թվականի պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշները	«Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք, «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, «Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենք, «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, ՀՀ վարչապետի 2020թ. հունվարի 9-ի «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» թիվ 5-Ա որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2021 թվականի հոկտեմբերի 18-ից մինչև 2022 թվականի հունվարի 31-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132–Լ որոշմամբ հաստատված

«ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում	Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Եղիշե Սողոմոնյանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն:

2. **Ծրագիր 1** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում» «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (0170101) (Արտաքին տոկոսավճարներ):

3. **Ծրագիր 2** – (1006-13001) «Կառավարության պարտքի սպասարկում «Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճարներ)» - (01070101) (Ներքին տոկոսավճարներ):

4. **Ծրագիր 3** – (1212-12002) «Ֆինանսական աջակցություն տեղական ինքնակառավարման մարմիններին» «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ և Ազգային Ժողովի ընդունած օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» (01080101):

5. **Ծրագիր 4** - 1108-11001) «Պլանավորում, բյուջետավորում, գանձապետական ծառայություններ, պետական պարտքի կառավարում, տնտեսական և հարկաբյուջետային քաղաքականության մշակում և մոնիտորինգ» «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» հոդված (0101020)

6. **ԾՐԱԳՐԵՐ** - **Ծրագիր 1-ից մինչև Ծրագիր 4-ը** ներառյալ:

7. **Բազային Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

8. Հոդված 1 – (442200) «Արտաքին տոկոսավճարներ»:

9. Հոդված 2 – (441100) «Ներքին տոկոսավճարներ»:

10. Հոդված 3 – (463300) «Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաներ» և (463400) «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում»:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի շրջանակներում 2021թ. ինն ամիսների պլանների հանրագումարը կազմել է 183,079,444.6 հազ. դրամ, իսկ ճշտված պլանների հանրագումարը՝ 185,010,987.7 հազ. դրամ: 68,456.9 հազ. դրամի նվազումը վերաբերում է Ծրագիր 1-ին և արդյունք է 2021թ. ինն ամիսների վերադասի կողմից սահմանված կարգով ներքին վերաբաշխման (110,000.0 հազ. դրամ) և Ծրագիր 4-ին (ՀՀ կառավարության որոշմամբ նվազեցվել է 17,725.2 հազ. դրամով, միաժամանակ, վերադասի կողմից սահմանված կարգով ներքին վերաբաշխման միջոցով ավելացվել է 59,268.3 հազ. դրամով):

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների ֆինանսավորումները կազմել են 177,857,739.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսերը՝ 177,855,473.4 հազ. դրամ, փաստացի ծախսերը՝ 178,017,972.3 հազ. դրամ: ԾՐԱԳՐԵՐ-ի կատարողականը 2021թ. ինն ամիսների համար կազմում է 96,1%, իսկ տարեկան ճշտված պլանի նկատմամբ՝ 68,0%: 2021թ. ինն ամիսների պլանի մնացորդը կազմում է 7,153,248.0 հազ. դրամ, իսկ տարեկան պլանի մնացորդը՝ 83,691,583.0 հազ. դրամ

Նախարարության 2021թ. ինն ամիսների ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի և ֆինանսավորման տարբերությունները պայմանավորված են հետևյալ հանգամանքներով (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ -ի 2021թ. ինն ամիսներ ճշտված պլանի նկատմամբ թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2021թ. ինն ամիսներ			*Պատճառներ*
		Ճշտված պլան	Ֆինան-սավորում	Տարբերու-թյուն	
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
1	Ծրագիր 1	67,107,569.9	61,674,391.3	5,433,178.6	• *Վեցամսյա ԱՄՆ դոլարի LIBOR, վեցամսյա EURIBOR և SDR փոխոսադրույքի կանխատեսումային և 2021թ. ինն ամիսների վճարումների համար կիրառված փաստացի փոխոսադրույքների տարբերություն:* • *2020 թվականին և 2021թ. ինն ամիսների ընթացքում մի շարք վարկերի գծով մասհանումների պլանային ցուցանիշի էական թերակատարում:* • *SDR-ի ԱՄՆ դոլարի նկատմամբ կանխատեսումային և փաստացի ձևավորված փոխարժեքների տարբերություն:*
1	*2*	*3*	*4*	*5*	*6*

2	Ծրագիր 2	67,620,645.1	65,924,769.8	1,695,875.3	*Կանխատեսվածի հանդեպ փաստացի եկամտաբերության տարբերություն:*
3	Ծրագիր 3	48,492,602.6	48,492,602.6	---	-----
4	Ծրագիր 4	1,790,170.1	1,765,976.0	24,194.1	*Հաշվետու ժամանակաշրջանում տնտեսում (122.7 հազ. դրամ), վճարումների 2021թ. չորրորդ եռամսյակ տեղափոխում (23,071.4 հազ. դրամ) և գնման գործընթաց (1,000.0 հազ. դրամ):*
Ընդամենը՝		185,010,987.7	177,857,739.7	7,153,248,0	----

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նախարարությունից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով Նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021թ. ինն ամիսների ՀՀ պետական բյուջեի վեց ամիսների հաշվեքննության իրականացման համար դիտարկվել են նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականները: Հաշվեքննության ժամանակ կարևորվել է ՀՀ կառավարություն ներկայացրած բյուջեի կատարողականի վերաբերյալ հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալների ընդգրկելու խնդիրները:

Նախարարության 2021թ. ՀՀ պետական բյուջեի ինն ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում անհամապատասխանություններ և էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. տարեկան պլանը կազմել է 261,831,968.0 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը՝ 261,599,1422 հազ. դրամ: Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021թ. ինն ամիսների պլանը կազմել է 183,079,444.6 հազ. դրամ, ճշտված պլանը՝

185,010,987.7 հազ. դրամ, ֆինանսավորումը (դրամարկղային ծախս) 177,855,473.4 հազ. դրամ (տարեկան ճշտված պլանի 68,0 %-ը), իսկ փաստացի ծախսը՝ 178,017,972.3 հազ. դրամ: Նախարարության 2021թ. տարեկան և ինն ամիսների ֆինանսական ամփոփ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

Նախարարության ԾՐԱԳՐԵՐ-ի 2021 թվականի ինն ամիսների ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազ. դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսա-վորման անվանումը, *(ծածկագիրը)*	**2021թ. տարեկան պլան**	Փոփոխու-թյուններ տարեկան պլանում		**2021թ. տարեկան ճշտված պլան**	2021թ. ինն ամիսներ							Կատարման տոկոսը	
		ՀՀ կառավարության կողմից (+, -)	*Վերադասի կողմից (+, -)*		**Պլան**	Փոփոխություն-ներ 2021թ. ինն ամիսների պլանում		**Ճշտված պլան**	Փաստացի ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարեկան ծրագրի պլանի փոփոխություն	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի կատարում
						ՀՀ կառավարության կողմից (+, -)	*Վերադասի կողմից (+, -)*						
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
(104021) Նախարա-րության **ԾՐԱԳՐԵՐ,** *այդ թվում՝*	**261,831,968.0**	*-157,094.1*	*-75,731.7*	**261,599,8142.2**	**183,079,444.6**	*-17,725.2*	*50,731.7*	**185,010,987.7**	177,855,473.4	177,855,473.4	178,017,972.3	68.0	96.1
Ծրագիր 1	**82,427,306.9**	-115,000.0	-80,000.0	**82,232,306.9**	**67,217,569.9**	--	*-110,000.0*	**67,107,569.9**	61,674,391.4	61,674,391.4	61,674,391.4	75.0	91.9
Ծրագիր 2	**112,268,379.5**	--	--	**112,268,379.5**	**67,620,645.1**	--	--	**67,620,645.1**	65,924,769.7	65,924,769.7	65,924,769.7	58.0	97.5
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*	*11*	*12*	*13*	*14*
Ծրագիր 3	**64,596,984.0**	--	--	**64,596,984.0**	**48,447,738.0**	--	--	**48,447,738.0**	48,447,738.0	48,447,738.0	48,447,738.0	75.0	100.0

Ծրագիր 4	**2,539,297.6**	*-42,094.1*	*4,268.3*	**2,501,471.8**	**1,748,627.0**	*-17,725.2*	*59,268.3*	**1,790,170.1**	1,765,976.0	1,763,709.7	1,926,208.6	70.5	98.5

2020 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտաքին վարկերի գծով պարտքը ձևավորված է եղել 20 աղբյուրներից (7 օտարերկրյա պետություններ, 10 միջազգային կազմակերպություններ և 3 առևտրային բանկեր) ներգրավված թվով 227 վարկերից կամ վարկերի մասնաբաժիններից, որոնց սպասարկման գծով վճարման ենթակա տոկոսավճարները սահմանված են համաձայն վարկային համաձայնագրերով վճարումների ժամանակացույցերի:

2021թ. ինն ամիսների ընթացքում արտաքին վարկերի սպասարկումը իրականացվել է վերոհիշյալ 20 աղբյուրներից ներգրավված վարկերի գծով ներգրավված թվով 228 վարկերից կամ վարկերի մասնաբաժիններից: Արտաքին վարկերի սպասարկումը ըստ պայմանագրերի 2021թ. ինն ամիսներին կազմել է 26,897,408.9 հազ. ՀՀ դրամ կամ 52,226,116.7 ԱՄՆ դոլար (տես՝ ստորև Աղյուսակ 3):

2021թ. ինն ամիսների կտրվածքով արտարժութային պարտատոմսերի սպասարկման համար վճարվել է 34,784,356.7 հազ. դրամ, ինչը կազմում է վճարված արտաքին տոկոսավճարների 56.4 %-ը:

Աղյուսակ 3

2021թ. ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա պետությունների և առևտրային բանկերի կողմից ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի սպասարկման մասին

Թիվ	Օտարերկրյա պետություններ, միջազգային կազմակերպու-թյուններ, առևտրային բանկեր	**2020թ. դեկտեմբերի 31**-ի դրությամբ տրամադրված վարկերի կամ վարկերի մասնաբաժինների		**2021թ. սեպտեմբերի 30**-ի դրությամբ դրությամբ տրամադրված վարկերի կամ վարկերի մասնաբաժինների		Վճարված տոկոսավճարներ **30.09.2021թ.-ի** դրությամբ	
		Քանակ (հատ)	***Գումար (մլն. ԱՄՆ դոլար)***	***Քանակ (հատ)***	***Գումար (մլն. ԱՄՆ դոլար)***	***(ԱՄՆ դոլար)***	***(հազ. ՀՀ դրամ)***
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*

1	**ՎԶՄԲ** (Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ)	**33**	**793.3**	**34**	**812.5**	7,369,775.6	3,824,231.4
2	**ԶՄԸ** (Վերակառուցման ն Միջազգային Ընկերակցություն)	**66**	**994.5**	**66**	**931.5**	7,107,579.5	3,676,602.4
3	**ՎԶԵԲ** (Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ)	**12**	**20.6**	**12**	**21.5**	156,862.6	81,871.3
4	**ԵՆԲ** (Եվրոպական Ներդրումային Բանկ)	**26**	**133.0**	**26**	**130.1**	1,024,294.1	534,609.8
5	**ԳԶՄՀ** (Գյուղատնտեսական Զարգացման Միջազգային Հիմնադրամ)	**7**	**67.3**	**7**	**63.4**	478,508.0	243,867.7
6	**ՕՄԶՀ** (ՕՊԵԿ-ի Միջազգային Զարգացման Հիմնադրամ)	**5**	**50.2**	**5**	**46.2**	1,649,961.0	848,284.6
7	**ԱԶԲ** (Ասիական Զարգացման Բանկ)	**21**	**774.9**	**21**	**760.7**	9,940,382.3	5,112,861.2
8	**ԱՄՀ** (Արժույթի Միջազգային Հիմնադրամ)	**2**	**357.7**	**2**	**339.7**	3,830,155.9	1,957,545.0
9	**ԵՄ** (Եվրոպական Միություն)	**2**	**79.7**	**2**	**75.8**	1,129,338,3	548,666.4
10	**ԵԶԲ** (Եվրասիական Զարգացման Բանկ)	**3**	**317.0**	**3**	**322.6**	3,357,357.0	1,757,741.0
	Ընդամենը միջազգային կազմակերպություններ	177	3,588.2	178	3,504.1	**36,044,214.1**	**18,586,280.9**
1	**Գերմանիայի ՎՎԲ** (Վերականգնողական Վարկերի Բանկ)	**22**	**278.1**	**22**	**271.5**	2,806,636.5	1,436,574.0
2	**ՌԴ** (Ռուսաստանի Դաշնություն)	**3**	**359.4**	**3**	**322.3**	9,644,856.6	4,961,095.3
3	**ՖՀ** (ֆրանսիայի Հանրապետություն)	**11**	**149.7**	**11**	**141.4**	992,664.6	512,463.4
4	**ՃՀ** (Ճապոնիայի Հանրապետություն)	**3**	**227.6**	**3**	**201.0**	1,799,344.6	920,741.7
5	**ԱՄՆ** (Ամերիկայի Միացյալ Նահանգներ)	**4**	**14.7**	**4**	**13.1**	259,173.1	133,379.5
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*
6	Աբու Դաբիի Զարգացման Հիմնադրամ	**1**	**4.0**	**1**	**3.7**	69,921. 8	36,527.1
7	Չինաստանի Արտահանման - Ներմուծման Բանկ	**1**	**23.0**	**1**	**21.6**	466,877.1	238,098.6
	Ընդամենը օտարերկրյա պետություններ՝	**45**	**45**	**1,056.5**	**45**	**974.7**	**16,039,474.2**
1	ԿԲՍ ԲԱՆԿ (Բելգիա)	**1**	**3.0**	**1**	**2.6**	10,721.9	5,623.5

2	Ռաֆայզն ԲԱՆԿ (Ավստրիա)	**1**	**7.7**	**1**	**6.4**	53,390.1	27,033.6
3	Էռստե ԲԱՆԿ (Ավստրիա)	**3**	**9.8**	**3**	**8.6**	78,316.4	39,591.4
Ընդամենը առևտրային բանկեր՝		**5**	**20.6**	**5**	**17.6**	**142,428.4**	**72,248.5**
Ա Մ Բ Ո Ղ Ջ Ը՝		**227**	**4.665.2**	**228**	**4.496.4**	**52,226,116.7**	**26,897,408.9**

2021թ. ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական գանձապետական պարտատոմսերի (արժեկտրոններ և այլ վճարներ) տոկոսավճարները հաշվետու ժամանակաշրջանում կազմել են 65,924,769.7 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

2021թ. ինն ամիսների ընթացքում ՀՀ պետական բյուջեից պետական գանձապետական պարտատոմսերի սպասարկման գծով կատարված վճարումների մասին

(հազար դրամ)

Թիվ	Պարտատոմսի տեսակներ	Տոկոսավճարներ (արժեկտրոն և այլ վճարներ)
1	Երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	52,027,925.2
2	Միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր	11,757,018.0
3	Կարճաժամկետ պարտատոմսեր	1,765,391.1
4	Խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր	374,435.4
	Ընդամենը՝	**65,924,769.7**

Նախարարության Ծրագիր 3-ի 2021թ. ինն ամիսների պլանը, ճշտված պլանը, փաստացի ֆինանսավորումը, դրամարկղային և փաստացի ծախսերը կազմել են 48,402,873.4 հազ. դրամ: Հաշվեքննության ընթացքում նշված ամփոփ ֆինանսական ցուցանիշների գծով տարբերություններ չեն արձանագրվել, դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն հաշվառվել:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի՝ համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեից համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով հատկացվում են դոտացիաներ: Համայնքներին չեն կարող պարտադրվել ֆինանսական համահարթեցման սկզբունքով հատկացված ֆինանսական միջոցներն օգտագործել որևէ կոնկրետ ծախս իրականացնելու կամ հաշվանցում կատարելու համար: Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի

համայնքների ներդաշնակ զարգացումն ապահովելու նպատակով պետական բյուջեի ծախսերում նախատեսվում են համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով՝ համայնքների ընթացիկ ծախսերի ծածկման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներ (ֆինանսական համահարթեցման դոտացիաներ):

«Ֆինանսական համահարթեցման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ դոտացիաների գումարները հաշվարկելու համար ՀՀ կառավարության կողմից լիազորած տարածքային կառավարման և զարգացման բնագավառում պետական լիազոր մարմինը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունն է (այսուհետ՝ Բազային Նախարարություն):

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի և «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերության դրույթների՝ պետական բյուջեից համայնքներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տվյալ տարում տրամադրվող դոտացիաների ընդհանուր գումարը (ներառյալ՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 93-րդ հոդվածի համաձայն պետության կողմից համայնքներին տվյալ տարում տրվող փոխհատուցման գումարները) սահմանվում է ոչ պակաս, քան տվյալ տարվան նախորդող երկրորդ բյուջետային տարում (2019թ.) ՀՀ համախմբված բյուջեի փաստացի եկամուտների հանրագումարի 4 տոկոսը (64,596,984.0 հազ. դրամ):

ՀՀ Վարչապետի 2020թ. հունվարի 9-ի «ՀՀ 2021 թվականի բյուջետային գործընթացն սկսելու մասին» թիվ 5-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ համայնքներին ՀՀ 2021 թվականի պետական բյուջեից տրամադրվելիք ֆինանսական համահարթեցման դոտացիաների գումարների հաշվարկում կիրառված տվյալները համապատասխան մարմինների կողմից տրամադրվել են Բազային Նախարարությանը:

ՀՀ համայնքների բյուջեներին օրենքով սահմանված կարգով ֆինանսական համահարթեցման դոտացիաների և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով նախատեսված հատկացումների ընդհանուր ծավալի բաշխումն ըստ առանձին համայնքների ներկայացված է «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 2 հավելվածով:

ՀՀ համայնքների բյուջեներին 2021թ. ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները հաշվարկվում և տրամադրվում են հանրապետության բոլոր՝ թվով 502 համայնքներին, այդ թվում՝ ք.Երևանին, Արագածոտնի մարզում՝ 72 համայնքներին, Արարատի մարզում՝ 95, Արմավիրի մարզում՝ 97, Գեղարքունիքի մարզում՝ 57, Լոռու մարզում՝ 56, Կոտայքի մարզում՝ 42, Շիրակի մարզում՝ 42, Սյունիքի մարզում՝ 8, Վայոց ձորի մարզում՝ 8 և Տավուշի մարզում՝ 24 համայնքներին:

ՀՀ ֆինանսների նախարարությունը գանձապետական համակարգի միջոցով, համաձայն «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի թիվ 2 հավելվածի և ՀՀ կառավարության 2020թ. դեկտեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության 2021թ. պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215 որոշման 4-րդ հավելվածի 1-ին աղյուսակով սահմանված համամասնությունների, համայնքներին յուրաքանչյուր ամիս փոխանցվում է դոտացիաների գումարները և ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքների 2019թ. բյուջեների եկամուտների կորուստների փոխհատուցման նպատակով նախատեսված հատկացումները:

2021թ. օրենքով նախատեսված 64,596,984.0 հազ. դրամից (դոտացիա՝ 64,537,164.5 հազ. դրամ + կորուստներ՝ 59,819,5 հազ. դրամ) 2021թ. ինն ամիսներին համայնքներին փաստացի փոխանցվել է 48,447,738.0 հազ. դրամ ընդհանուր գումար, որի մեջ ներառված է նաև Նախարարության Ծրագիր 3-ում (463400) «Օրենքների կիրարկման արդյունքում համայնքների բյուջեների կորուստների փոխհատուցում» հոդվածով համայնքներին տրամադրված 44,864.6 հազ. դրամ գումարը, ինչը արտացոլվել է նաև Նախարարության Ծրագիր 3-ի արդյունքային, ոչ ֆինանսական ցուցանիշների համապատասխան հաշվետվության մեջ: Հաշվեքննության առարկա հանդիսացող զուտ դոտացիաների հանրագումարը Նախարարության Ծրագիր 3-ում կազմել է 48,402,873.4 հազ. դրամ: Դոտացիաների փաստացի տրամադրված գումարներն արտահայտվում են համայնքների բյուջեներում, վերջիններիս վերաբերյալ համայնքների ամենամսյա եկամուտների հաշվետվություններում, ինչպես նաև պարբերաբար տեղադրվում համայնքների, ՀՀ մարզպետարանների և Բազային Նախարարության պաշտոնական կայքերում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Բազային Նախարարության կողմից ըստ տարբեր նախարարություններից և գերատեսչություններից ստացված ելակետային տվյալների հիման վրա հաշվարկված համայնքներին հասանելիք դոտացիաների գումարների, և Նախարարության կողմից, ըստ գանձապետական համակարգի դրանց հատկացման փաստացի ֆինանսական ցուցանիշների միջև տարբերություններ չեն առաջացել:

Նախարարության Ծրագիր 4-ի 2021թ. ինն ամիսների պլանը սահմանվել է 1,748,627.0 հազ. դրամ, տարեկան ճշտված պլանը հաստատվել է 1,790,170.1 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,765,976.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 1,763,709.7 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,926,208.6 հազ. դրամ: Ծրագիր 4-ի կատարողականը 98,6%, տարեկան ճշտված պլանի հանդեպ՝ 70,6%, հաշվետու ժամանակաշրջանի պլանի մնացորդը կազմել է 24,194.1 հազ. դրամ, իսկ տարեկան պլանի մնացորդը՝ 735,495.8 հազ. դրամ:

Նախարարության Ծրագիր 4-ի 2021թ. ինն ամիսների պլանի և ճշտված պլանի միջև 41,543.1 հազ. դրամի տարբերությունը վերադասի կողմից սահմանված կարգով ըստ

տարբեր հոդվածների կատարված վերաբաշխումների արդյունք է, նշված տարբերությունը գոյացել է թվով 9 հոդվածներում 101,499.5 հազ. դրամի ավելացումների և թվով 13 հոդվածներում 59,956.4 հազ. դրամի նվազեցումների հետևանքով:

Նախարարության Ծրագիր 4-ի 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի և ֆինանսավորման միջև 24,194.1 հազ. դրամի տարբերությունը, պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանում տնտեսման (122.7 հազ. դրամ), վճարումները 2021թ. չորրորդ եռամսյակ տեղափոխման (23,071.4 հազ. դրամ) և գնման գործընթացի ընթացքում լինելու (1,000.0 հազ. դրամ) հանգամանքներով:

Նախարարության Ծրագիր 4-ի 2021թ. ինն ամիսների ճշտված պլանի և դրամարկղային ծախսի միջև 26,460.4 հազ. դրամի տարբերությունը վերոհիշյալ հանգամանքներով պայմանավորված հանգեցրել է ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի միջև 2,666.3 հազ. դրամի տարբրության, որն, ըստ հոդվածների ծախսերի տարեկան կտրվածքով շարունակական բնութագրման, կախված են հիմնականում տնտեսման հետ:

Նախարարության Ծրագիր 4-ի 2021թ. ինն ամիսների փաստացի և դրամարկղային ծախսի 162,489.9 հազ. դրամ տարբերությունը համընկնում է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի հաշվարկի հետ:

6. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

6.1 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,369.8 մլրդ. ՀՀ դրամ կամ 9,038.1 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 4,164.3 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,968.5 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն՝ ՀՀ պետական պարտքն աճել է 205.6 մլրդ. ՀՀ դրամով (4,9 %) կամ 1,069.6 մլն. ԱՄՆ դոլարով (13,4 %):

6.2 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4,140.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 8,564.5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 3,923.9 մլրդ. ՀՀ դրամ կամ 7,508.5 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն ՀՀ կառավարության պարտքն աճել է 217.0 մլրդ. ՀՀ դրամով (5,5%) կամ 1,056.0 մլն. ԱՄՆ դոլարով (14,1 %): ՀՀ կառավարության պարտքի կազմում արտաքին պարտքը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 2,993.8 մլրդ. ՀՀ դրամ կամ 6,192.0 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 2,926.2 մլրդ. ՀՀ դրամ կամ 5,599.5 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն 2021թ. ինն ամիսների կտրվածքով ՀՀ

կառավարության արտաքին պարտքն աճել է 67.5 մլրդ. ՀՀ դրամով (2,3 %) կամ 592.5 մլն. ԱՄՆ դոլարով (10,6 %), որից.

6.2.1 Արտաքին վարկերն և փոխառությունները նվազել են 264.0 մլրդ. ՀՀ դրամով (10,8 %) կամ 168.8 մլն. ԱՄՆ դոլարով (3,6 %),

6.2.2 Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերն աճել է 21.7 մլրդ. ՀՀ դրամով (657,9 %) կամ 45.3 մլն. ԱՄՆ դոլարով (719,2 %),

6.2.3 Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերն աճել է 310.4 մլրդ. ՀՀ դրամով (64,6 %) կամ 716.4 մլն. ԱՄՆ դոլարով (77,9 %):

6.2.4 Արտաքին երաշխիքները նվազել են 0.5 մլրդ. ՀՀ դրամով (12, 0 %) կամ 0.4 մլն. ԱՄՆ դոլարով (4,9 %) (Տես՝ Հավելված 2):

6.3 ՀՀ կառավարության պարտքի կազմում ներքին պարտքը 2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ կազմել է 1,147.1 մլրդ. ՀՀ դրամ կամ 2,372.5 մլն. ԱՄՆ դոլար, իսկ 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այն կազմել էր 997.6 մլրդ. ՀՀ դրամ կամ 1,909.0 մլն. ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2021թ. ՀՀ կառավարության ներքին պարտքն աճել է 149.5 մլրդ. ՀՀ դրամով (15,0 %) կամ 463.5 մլն. ԱՄՆ դոլարով (24,3 %), որից.

6.3.1 Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսերն աճել է 136,4 մլրդ. ՀՀ դրամով (14,3 %) կամ 429.9 մլն. ԱՄՆ դոլարով (23,5 %),

6.3.2 Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսերն աճել է 13.1 մլրդ. ՀՀ դրամով (31,1 %) կամ 33.6 մլն. ԱՄՆ դոլարով (41,7 %) (Տես՝ Հավելված 1 և Հավելված 2):

Հաշվեքննության օբյեկտի պարզաբանումը. Արձագանքը բացակայում է:

Հաշվեքննության օբյեկտի 2022թ. հունվարի 20-ի թիվ 01/17-1/769-2022 գրությունը կցվում է (3 էջ):

7. ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1

2021 թվականի ինն ամիսների ՀՀ պետական պարտքի, ՀՀ կառավարության պարտքի (արտաքին և ներքին) վերաբերյալ

Թիվ	Ցուցանիշներ	2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2021թ. սեպտեմբերի 30-ի դրությամբ		2021թ ինն ամիսների ընթացքում առաջացած տարբերությունները *(աճ /+ / , նվազում / - /)*			
		Մլրդ. ՀՀ դրամ	Մլն. ԱՄՆ դոլար	*Մլրդ. ՀՀ դրամ*	Մլն. ԱՄՆ դոլար	Մլրդ. ՀՀ դրամ	*Տոկոս (%)*	Մլն. ԱՄՆ դոլար	*Տոկոս (%)*
1	**ՀՀ պետական պարտք**, ընդամենը, *որից՝*	**4,164.3**	**7,968.5**	**4,369.8**	**9,038.1**	**205.6**	*4.9*	**1,069.6**	*13.4*
2	**ՀՀ կառավարության պարտք** *(տող 2.1 + տող 2.2),* ընդամենը,	**3,923.9**	*100.0*	**4,140.9**	*100.0*	**217.0**	*5.5*	**1,056.0**	*14.1*
2.1	Կառավարության **արտաքին** պարտք ընդամենը, *(տող 2.1.1 + տող 2.1.2 + 2.1.3 + 2.1.4), այդ թվում՝*	**2,926.2**	**5,599.5**	**2,993.8**	**6,192.0**	**67.5**	*2.3*	**592.5**	*10.6*
2.1.1	*Արտաքին վարկեր և փոխառություններ*	***2,438.0***	***4,665.2***	***2,174.0***	***4,496.4***	***-264.0***	*-10.8*	***-168.8***	*-3.6*
2.1.2	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական*	***3.3***	***6.3***	***24.9***	***51.6***	***21.6***	*657.9*	***45.3***	*719.2*

	գանձապետական պարտատոմսեր								
2.1.3	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր*	***480.5***	***919.4***	***790.9***	***1,635.8***	***310.4***	*64.6*	***716.4***	*77.9*
2.1.4	**Արտաքին երաշխիքներ**	***4.5***	***8.6***	***3.9***	***8.2***	***-0.5***	*-12.0*	***-0.4***	*-4.9*
2.2	Կառավարության **ներքին** պարտք (տող 2.2.1 + տող 2.2.2) ընդամենը, *այդ թվում՝*	**997.6**	*25.4*	**1,147.1**	*27.7*	**149.5**	*15.0*	**463.5**	*24.3*
2.2.1	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված պետական գանձապետական պարտատոմսեր*	***955.5***	***1,828.5***	***1,091.9***	***2,258.4***	***136.4***	*14.3*	***429.9***	*23.5*
2.2.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված արտարժույթային պետական պարտատոմսեր*	***42.1***	***80.6***	***55.2***	***114.2***	***13.1***	*31.1*	***33.6***	*41.7*

Հավելված 2

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքի վերաբերյալ

Թիվ	**Ցուցանիշներ**	**2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**		**2021թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ**		2021թ ինն ամիսների ընթացքում առաջացած տարբերությունները *(աճ /+ / , նվազում / - /)*	
		Մլրդ. ՀՀ դրամ	*Տեսակարար կշիռը (%)*	***Մլրդ. ՀՀ դրամ***	*Տեսակարար կշիռը (%)*	***Մլրդ. ՀՀ դրամ***	*Տոկոս (%)*
1	**ՀՀ կառավարության պարտք** ընդամենը, *այդ թվում՝*	**3,923.9**	*100.0*	**4,140.9**	*100.0*	**217.0**	*5.5*
1.1	Կառավարության **ներքին** պարտք	**997.6**	*25.4*	**1,147.1**	*27.7*	**149.5**	*15.0*
1.2	Կառավարության **արտաքին** պարտք	**2,926.2**	*74.6*	**2,993.8**	*73.9*	**67.5**	*2.3*

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ գործիքակազմի

1	**Արտաքին վարկեր և փոխառություններ**	**2,438.0**	*62.1*	**2,174.0**	*54.1*	***-264.0***	*-10.8*

2	**Պետական գանձապետական պարտատոմսեր** ընդամենը, *այդ թվում՝*	**958.8**	*24.4*	**1,116.8**	*24.9*	***158.0***	*16.5*
2.1	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**3.3**	*0.1*	**24.9**	*0.1*	***21.7***	*657.9*
2.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**955.5**	*24.3*	**1,091.9**	*24.8*	***136.4***	*14.3*
3	**Արտարժույթային պետական պարտատոմսեր** ընդամենը, *այդ թվում՝*	**522.6**	*12.3*	**846.1**	*20.8*	***323.5***	*61.9*
3.1	*Ոչ ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**480.5**	*12.2*	**790.9**	*19.6*	***310.4***	*64.6*
3.2	*Ռեզիդենտների կողմից ձեռքբերված*	**2,438.0**	*62.1*	**2,174.0**	*54.1*	***-264.0***	*-10.8*
4	**Արտաքին երաշխիքներ**	**958.8**	*24.4*	**1,116.8**	*24.9*	***158.0***	*16.5*